
**ՀՈՒՄՈՐԸ՝ ՈՐՊԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՅՈՒՈՒՄ
Ն.ԴՈՒՄԲԱԶԵԻ ՎԵՊՈՒՄ**

ԲԱԼԱՅԱՆ Ն. Մ.

XX դարի կեսերին Խորհրդային Միության տարածքում ազգային գրականությունը, ազատվելով գաղափարական պարտադրանքից և դրանից ածանցված կաղապարված մտածողությունից ու սահմանումներից, ձեռք բերեց նոր առանձնահատկություններ, որոնք թարմ, կենսական լիցքեր հաղորդեցին գրական տեքստին, դրվատեցին մարդու ստեղծագործական որակները: Այսպիսի ստեղծագործություններով է հանդես գալիս վրաց տաղանդավոր գրողներից մեկը՝ Նոդար Դումբաձեն, որի գրական երկերը շեշտակի տարբերվում են նախորդ հեղինակների արձակից: Պատճառը, իհարկե, կենսագրական մասնակի ատաղձն է: Նրա ստեղծագործական հայեցակարգի վրա էապես ազդել են մանկության տարիները. որք տղան մոտ մի քանի տարի ապրել է Վրաստանի գեղատեսիլ շրջաններից մեկում՝ Գուրիայում, տատի, այնուհետև պապի հետ: Հենց այդ ժամանակահատվածում էլ ձևավորվել է մարդկանց հետ հարաբերվելու այն տեսակը, որը նրան առաջնորդել է ոչ միայն կյանքն իրապես ապրելու ընթացքում, այլև գրական արարումներում և խտացել հեղինակի համար որպես յուրահատուկ կարգախոս. «Բւ ծննդյան տիրույթը կյանքի հատուկ տաղանդն է ու անվերջանալի ուրախության տաղանդը»:

Հ. Բայրամյանը գրում է. «Դումբաձե գրողի անհատականությունն ընդգծվում է նաև նրանով, որ, առանց բացառության, բոլոր երկերում և ամեն կարգի հարցեր շոշափելիս՝ մարդկային սրբազան զգացմունք, թե դրամատիկ պահ, ողբերգական անցք, թե փիլիսոփայի մտորում, լուրջ երկխոսություն, թե լեզվակրիվ, անխտիր հումորով է շաղախում»¹:

Հեղինակը նշում է նաև, որ քննադատները հավաստում են, որ գրական հումորը իր իսկական բնույթով վրաց գրականությունն է բերել Նոդար Դումբաձեն²: Չափազանցված է վերոհիշյալը թե ոչ, այդուամենայնիվ, Դումբաձեի երկերն իրոք ներծծված են մեծ հումորով, որին, սակայն, խառնված են ապրված կյանքի ցավն ու տառապանքը: Նրա ստեղծագործություններում հակոտնյա երևույթների միահյուսումը կամ էլ մեկից մյուսին անցումը զուտ հեղինակային լուծումների արդյունք է: Գրողը վարպետորեն է կառուցում անցումները. ժպիտին, ծիծաղին հաջորդում է հեղձուցիչ փղձուկը, և հետո, այնուամենայնիվ, հոգին տվայտող ցավը վերստին տարրալուծվում է մեղմ հումորի մեջ:

Այսպիսի երկ է նրա անդրանիկ վեպը՝ «Ես, տատիկը, Բլիկոն և Բլարիոնը» (1959 թ.), որը գրեթե անմիջապես միջազգային ճանաչում բերեց հեղինակին:

¹ **Ն. Դումբաձե**, Ընտիր երկեր, հ. 2, Ե., 1987, էջ 521:

² Նույն տեղում, էջ 522:

Վեպր, ինչպես և նրա ստեղծագործություններից շատերը, ինքնակենսագրական հենք ունի:

Գլխավոր հերոսները չորսն են: Բոլորն էլ ինքնուրույն, առանձին կերպարներ են, բայց սերտորեն շաղկապված, միահյուսված, փոխլրացված:

Գլխավոր հերոսը՝ պատանի Զուրիկոն, որք է. ծնողների դերը ստանձնել են տատը և երկու միայնակ հարևանները՝ Բլիկոն և Բլարիոնը: «Ես իմ Օլգա տատի տղան եմ, նաև՝ Բլարիոնի ու Բլիկոյի տղան եմ»³, - վկայում է պատանի հերոսը: Հետաքրքիր է, որ հեղինակը արտաքին գրեթե ոչ մի նկարագրություն չի տվել հերոսներին: Տատը և տղան առհասարակ ոչ մի արտաքին նկարագրություն չունեն. այն ենթադրելի է, քանի որ հոգեբանական կերպարների դեպքում արտաքին նկարագրությունը մարում է ներքին գաղափարական կերպի մեջ: Բլիկոն և Բլարիոնը, ըստ հեղինակի, արտաքինապես տարբերվում են միայն նրանով, որ Բլիկոն ունի մի աչք, Բլարիոնը՝ մեծ քիթ, ըստ այդմ էլ հեղինակը նրանց կոչում է Միաչքանի Բլիկո և Քիթ Բլարիոն: Արտաքին նկարագրության պակասը Դուբրաձեն լրացրել է, բացել է ներքին հոգեկան աշխարհի բացահայտմամբ, նրանց մեծ սրտից բխող անեղծ ու անսահման մարդասիրությամբ և այդ հատկանիշներով ծալ առ ծալ, մերկության աստիճանի բացահայտել նրանց տիպերը: Հերոսները «անտարիք» են, նրանք, խտացնելով ապրած կյանքի տարիները, կենսական փորձը, ձեռք են բերում գոյի ներանձնային դիմագիծ: Իրենց «քավթառ», «ծերուկ» կոչելն էլ հենց իրենց կողմից ոչ թե նախանշում է տարիքային շեմը, ըստ որի, նրանք հավուր տարիքի կարող են ուղղորդել, թելադրել կամ պարտադրել որևէ բան մյուսներին, այլ վկայում է հատուկ, հավաքական մի կերպարի գոյությունը, որը և խտացնում է վրաց ազգային կենսակերպը, դիմագիծը... «Ճիշտ է, քեզնից երեսուն տարով մեծ եմ, -ասում է Բլարիոնը, - բայց ես, երբ քո տարիքին էի, էն ժամանակ հո ե՞ս էլ քո տարիքին էի: Հա, երեսուն տարուց հետո էլ հո դու՞ իմ տարիքին կդառնաս: Ուրեմն մեր միջև տարբերություն կա՞: Չկա՞: Կամ նշանակություն ունի՞, թե մեզանից ով ավելի շատ բուրդ ու բմբուլ ունի գլխին: Չունի: Մենք բարեկամներ ենք»⁴:

Բլիկոյի ու Բլարիոնի՝ ազգային, դեպի բանահյուսական անցյալը գնացող տիպաբանական հատկանիշների մասին Դուբրաձեն վկայում է Զուրիկոյի՝ այս երկուսի մասին պատմություններում, որոնք նա հորինում է՝ լալու աստիճան ծիծաղելի իրադրություններ շարադրելով: Եվ պատահական չէ, որ անձանոթ շրջապատում միայնակ տղայի համար Բլարիոնը դառնում է բարի մարդու չափանիշ. նրան հանդիպած այսպիսի մարդիկ թոթափում են մարդկային պատյանը, ձուլվում, ամբողջանում, դառնում են մեծ բարություն, որն իր անունն ունի՝ Բլարիոն...

Այսպիսով, Բլիկոն ու Բլարիոնը դառնում են վրաց հասարակ ժողովրդի դիմագիծը կրող և միևնույն ազգային, բանահյուսական տարրերը խտացնող կերպարներ:

³ Նույն տեղում, էջ 83:

⁴ Նույն տեղում, էջ 16:

Ուշագրավ է, որ հերոսների մուտքը վեպի տեքստ կատարվում է առանց «հրավերի», առանց ավելորդ ծանուցումների: Հիվանդ ձուրիկոյի սնարին են հայտնվում հարևանները և միանգամից խառնվում խոսակցությանը: Ուրեմն, հեղինակի համար այս տիպերը ոչ ծնվող են, ոչ մահացող, սրանք կային վիպելուց առաջ և նույնքան հին են, ինչքան հին է աստվածաստեղծ բնությունը: Հեղինակի մեջ մտասնեման այս դրույթը հիմնարար է. մարդը ձուլվում է բնությանը, կենդանուն և որպես առանձին տեսակ շարունակում հայել, բարբառել, ցավել, տառապել, սիրել: Դումբաձեի մտատիպարները կարող են սերտորեն աղերսվել այլ մտածողի՝ Ջ. Մվիֆթի գաղափարական հերոսներին՝ եհուններին ու հուիհնհնմներին, որոնք ևս փոխվում են մարմիններով ու գաղափարաբանությամբ:

Վրաց հեղինակի վեպում Մուրադան Ձուրիկոյի շունը, մտածող, մարդ հերոսների հետ ազատ խոսակցող անհատ է, որը մեռնում է, (մեռնում, ոչ թե սատկում) հարազատի գնդակից: Շանը մարդեղացնելը հեղինակի շնորհքը չէ (այսպես է կարծում հեղինակը): Գենդանուն՝ որպես ընտանիքի անդամի, որպես մարդու, ընդունում է նրա իսկ ընտանիքը: Բլարիոնը հենց այդպես էլ դիմում է նրան. «Դիմացի, Մուրադա, սիրելիս, մի քիչ դիմացի, շուն չե՞ս, այ մարդ, դիմացի, էլի,- խնդրում էր Բլարիոնը և երեխայի պես հեկեկում»⁵: Մարդու և անասունի սահմանները ջնջվում են, հավուր պատշաճի էլ հոգեհացով ու կենացներով կազմակերպվում է շան թաղումը:

Գենդանիների անլեզու, բայց գործուն կերպարներ են կոլվի՝ Փաքիզոյի, կատվի՝ Սոֆիկի, խոզի՝ Սերապիոնայի տիպերը, որոնց հետ հարաբերությունները նպաստում են գլխավոր հերոսների բացահայտմանը: Եթե Սոֆիկի ու Սերապիոնայի արտաքին նկարագրությունն ավելի հարուստ է, ապա նույնքան ժլատ են ներքին բացահայտումները: Հեղինակը նպատակամիտված է այդպես վարվել հոգեբանական այլ կերպարների կողքին ավելի ցցուն գեղարվեստական պատկեր-կերպար առանձնացնելու համար: Ըստ Դումբաձեի, որքան պերճ է մարդկանց արտաքինը, այնքան սին ու անպտուղ է նրանց ներկայությունը կենդանի աշխարհում: Եվ տարօրինակության չափ պարզ է, որ հեղինակը մարդկանց հետ համեմատելու եզրեր է գտել հենց այդ կենդանիների միջոցով, որոնք մարդկային ոչինչ չունեն. շնչում են, ուտում և բազմանում:

Բլիկոյի համոզմամբ՝ մարդկանց նախնիները կենդանիներն են. «Ես կարծում եմ, որ տարբեր մարդիկ տարբեր նախնի են ունեցել: Օրինակ, ես համոզված եմ, որ Սերապիոնա Սեփերթելաձեի նախնին խոզ է եղել. իմ Սերապիոնային էլ մտիկ արա, Սերապիոնա Սեփերթելաձեին էլ: Ջխտակներ չե՞ն: Հետո՞ ինչ, որ իմ Սերապիոնան խոսել չգիտի. վերջիվերջո համար մարդիկ էլ են ծնվում, չէ՞: Հավանաբար իմ Սերապիոնան էլ դրանցից մեկն է»⁶: Անասունի և մարդու տարբերության սահմանը Բլիկոյի համար մնում է հեղհեղուկ: Սատկող կովի տառապանքը նրան է փոխանցվում. «Կովը նա չէ,

⁵ Նույն տեղում, էջ 20:

⁶ Նույն տեղում, էջ 60:

կուլը մենք ենք, որ չենք կարենում նրա համար մի լավ բան անենք. ավելին՝ տանջում ենք»⁷: Այդուհանդերձ, վրացական ազգին բնորոշ յուրաքանչյուր իրավիճակում օգուտ քաղելն էլ երբեմն սրբում է մարդու դավանած արժեքները՝ թույլ տալով գործել անասնաբար: Կովին վաճառելու, նրան անմարդկային եղանակներով արժեքային տեսքի բերելու հերոսների ճիգերն ու դրամ վաստակելու ապարդյուն փորձը, իհարկե, ըստ հեղինակի, պիտի դատապարտվեին, որովհետև մարդը դավաճանում էր իր ներսում ի վերուստ ամրագրված բարոյական չափանիշներին:

Դուլբաձեի ստեղծագործությունում կենտրոնական տեղ է զբաղեցնում ազգային խմիչքը՝ գինին: Այն առանձնահատուկ ազգային արժեք է, որը պաշտվում է, ինչպես հացը: Ըստ ամենայնի, գինին ջրի հրաշագործ կենարար խորհուրդն ունի, դրա էության կրողն է: Վրացական հավատալիքներում հացը, գինին ու կրակը՝ օջախը՝ ընտանիքը, հավասարազոր պաշտամունքային տիրույթում են: Դուլբաձեի «Շունը» պատմվածքում պապն իր թոռանը այսպես է պատգամում. «Էս օջախից չհեռանաս, բալա, ծուխը ծխացրու: Կրակով, մի կտոր հացով ու մի բաժակ գինով կդիմավորես հորդ...»⁸:

Վրաց հեղինակի «Ես, տատիկը, Բլիկոն և Բլարիոնը» վեպում գինին դառնում է հին աշխարհի Սոմա խմիչքի յուրօրինակ ժառանգորդը: Գինին, ըստ հեղինակի, արժեզրկված կամ դատարկ գոյությունը լցնելու համար չէ, այն դառնում է գրական-գեղարվեստական պատկեր-խորհրդանիշ, որի օգնությամբ օմերկանում՝ անկեղծանում, բացահայտվում են հերոսները: Գինու օգնությամբ ամբողջովին թոթափվում են աշխարհիկ կյանքի պարտադրումները. գինին՝ իբրև արյուն, իբրև ավիշ, կենսատու հեղուկ է աշխարհը հասկանալու, աստծո արարչագործության իմաստն ընկալելու համար: Իբրև խտացում Դուլբաձեի այս եզրահանգման՝ նրա «Խազարուլա» պատմվածքում խնձորենին՝ Խազարուլան, դառնում է հեղինակի փիլիսոփայական նման մտորումների կրողը: Երբ Խազարուլան այլևս չէր կարող պտղաբերել, մարդիկ, որոնց տարիներ շարունակ կերակրել էր ծառը իր բարիքով, նրան պետք է կացնատեին ու ազատեին տարածքը: Իրենով երբեմնի հպարտացող մարդիկ արդեն օտար էին, ու նրանց հասկանում է խնձորենին միայն հարբելուց հետո՝ իր մահվան օրը, երբ «ջղերը»՝ արմատները, պրկում է ու ջարդում դրանց տակ ամբարված կավե կարասը:

«Կարմիր հեղուկը աննկատ հոսում էր կարասի ճեղքերից, իսկ Խազարուլան տոչորվածի նման խմում էր ու խմում և կամաց-կամաց նրան տիրում էր ջերմություն, ուրախություն, անցյալում երբեք չզգացած երանելի դող, ինքնամոռացություն ու զմայլանք... Հարբեց Խազարուլան և հանկարծ զգաց, որ աշխարհը լուսավորվեց:

Խազարուլան ըմբռնեց վերջին կաթիլները և անսպասելորեն նրա համար պարզ դարձավ, թե որն է մարդու և զարմահրաշ հեղուկի գաղտնիքների խորհուրդը... Խազարուլան այլևս չէր զարմանում, թե մարդիկ

⁷ Նույն տեղում, էջ 173:

⁸ Նույն տեղում, էջ 486:

ինչու էին համբուրվում, գավաթը ձեռքներին ինչու էին արտասվում, ինչու էին հետապնդում միմյանց, ինչու էին կռվում, ինչու էին ծիծաղում, ինչու էին երգում, ձեռք ձեռքի տված ինչու էին պարում իր շուրջը...»⁹:

Դումբաձեն գինու՝ մարդկային կերպը բացահայտելու առանձնահատկությունն ավելի է շեշտադրում, ուժգնացնում առկա հումորով: Այս երկու գործոնով է պայմանավորված Բլիկոյի ու Բլարիոնի՝ քաղցրախոս դառնալու փոխակերպումը: Վերջինս ազգային էությունը ցուցանող հատկանիշ է, իսկ գինու ազդեցությամբ ճշմարտությունն ասելու քաջությունն արդեն ազգային սահմաններ չի ճանաչում:

Եթե գինին անձնային տարածքում ներկա չէ, ապա Բլիարիոնը հանդարտ, խորհրդատու և աշխարհի անցուղարձին իրազեկ է, մարդ, որ զարմանում է միայն, թե «Թբիլիսիի այսքան ժողովուրդը ինչպես է յուր գնում առանց «Ադեսա» գինու և առանց տաք ու թարմ ձաղիի»¹⁰:

Սակայն այլ է գինով արբեցած Բլարիոնը: «Քեզ մարդ միայն խմացնի, լեզուդ էնպես կքաղցրանա՝ տղեմալին մուրաբա կշինես», - ասում է տատը: Եվ խմիչքով աշխարհը փոխվում է, դառնում զարմանալիորեն հստակ, ներդաշնակ, ուր մարդու կեցության միակ նախապայման է դառնում մարդկային սիրտը կարդալը. «Ինձ թվում էր, - ասում է Ջուրիկոն, - թե Բլարիոնը ձեռքը մտցրել է կրծքիս մեջ, սիրտս հանել, զգուշորեն դրել ափի մեջ և բառ առ բառ կարդում է այն, ինչ գրված է նրա վրա»¹¹: Քիչ այլ բնութագրում ունի Բլիկոյի կերպարը: Նա պակաս զգացմունքային է, իրատես, մասամբ ժլատ: Միակ աչքի պես ունեցվածքը պահպանելու համար երբեմն կարևորում է շողոքորթությունը: Հեղինակը դա փաստում է մի քանի ծիծաղաշարժ դեպքերով ու հետո պատժում է հերոսին իր նախաստեղծ էությանը դավաճանելու համար՝ միննույն ժամանակ չձևախախտելով հերոսի հոգեբանական դիմագիծը: Ազահության պատճառով է Բլիկոն հայտնվում Բլարիոնի զարշահոտ կարասում, նույն ազահությամբ է Բլարիոնի ու Ջուրիկոյի գրության պատճառով այգին տակնուվրա անում՝ գանձ գտնելու հույսով: Հեղինակի համար Բլիկոյի փոքր թերությունները ձաղկելն ու ի ցույց դնելը հետապնդում են գերկերպար չստեղծելու ջանքը:

Հեղինակի այդ ցայտուն նպատակամիտումը երևան է գալիս գանձ որոնելու մեկշաքայաթյա գուր ջանքերից հետո կեղտով լի պուլիկը գտնող Բլիկոյի մենախոսության մեջ. «Բլիարիոն Շևարդնաձե, էլի հաղթեցիր ինձ: Չէ, էս անգամ ջախջախեցիր, պարզապես գլուխս թոցրի ռուերիցս: ...Ես հիմա գժված եմ, լսու մ ես, գժված եմ ու ցուփացած. բողազդ ատամներով կկտրեմ: Ասենք քեզնից ինչի՞ եմ բողոքում, իմ մեղքն է, չգիտեի՞, թե ինչ մուրացկանն է եղել իմ հերը: Ոսկի չէ, էս պուլիկի ծերտին էլ նա կարտո է եղել... Քիթ Բլարիոն, որ սա էիր պատրաստում, չէիր կարող բաթմանից քիչ ավելի գրել, բայց դե գծու՝ մուրացկան էս եղել ամբողջ կյանքումդ ... Էգուց երկուսդ էլ

⁹ Նույն տեղում, էջ 559:

¹⁰ Նույն տեղում, էջ 109:

¹¹ Նույն տեղում, էջ 49:

ծեզրը ծեզին կգաք հողը շուռ տալու, թե չէ նավթ կլցնեմ ձեր տների վրա ու կրակ կտամ»¹²:

Հեղինակը կարևորում է մարդկային այն տեսակը, որը բարեկամին ճանաչում է առանց քինախնդրության, առանց շահի, առանց որևէ ակնկալիքի: Որքան էլ Բլիկոն ու Բլարիոնը մերթընդմերթ զայրացնում են միմյանց, այդուհանդերձ, նրանց բարեկամությունը մնում է անսասան. նրանք շաղկապված են միմյանց և սերտորեն լրացնում են մեկը մյուսին, հաճախ տարրալուծվում իրար մեջ ու ամբողջանում: Ազգին յուրահատուկ զսպվածությունը զգացմունքների առարկայացման հարցում հաստուկ է երկուսին էլ: Միայն հազվագյուտ պահերի է այն դուրս հորդում ու ապշեցնում պարզ խոսքով վարագուրված մեծ ու աղաղակող ճշմարտությամբ, այն է՝ սեր ու բարություն առ մարդը:

Աչքը կորցնելուց հետո Բլարիոնը բացատրում է Սոֆիկին՝ կատվին. «Նա (իմա՝ Բլիկոն) մահու չափ ծանր կտանի, որ իմանա եղելությունը: Չէ՞: Ոնց թե՛ չէ: Նրա դատարկ աչքի տեղը ես էի լրացնում, հիմի երկուսս էլ մի-մի աչք ենք կորցրել, և երկուսով կլրացնենք միմյանց: Ինձ ու Բլիկոնին ի՞նչը կբաժանի իրարից. մենք երկուսով մեկն ենք, իսկ մի մարդը երկու աչք կունենա, ավելին ինչին է պետք»¹³: Նույն կենաց փիլիսոփայությունն է շարունակում Բլիկոն օրեր անց, երբ տեսնում է բարեկամի միաչքանի լինելը. «Մեռած էի ու թաղած չէի, որ իմացա, թող էս մի աչքս էլ քոռանա, թե սուտ եմ ասում: Լսո՞ւմ ես: Ինձ ու քեզ իրարից չես բաժանի, ծերուկ, դու կուրացած, թե՛ ես, մեկ է... Կամ մի հարցնող լինի, թե ի՞նչ է պատահել, ի՞նչ ես սուգ անում, մի աչք չի՞, հեր օրինա՞ծ, թեկու՞զ երկու աչքներս հանեն, կարծում ես շա՞տ բան կկորցնենք, ձեռք ձեռքի կտանք ու աշխարհը կշրջենք»¹⁴:

Բլիկոն և Բլարիոնը դառնում են գրողի համար այն յուրատեսակ բարոյական-իմացաբանական լույսը, որ ծագումնաբանորեն շաղկապված է մարդկային նախաստեղծ էությանը՝ զերծ ստիգ, կեղծիքից, չարությունից, ամեն մի կաղապարումից: Անգամ մեռնող մարդու պատգամը հենց այդպիսին պիտի լինի, ինչպիսին Զուրիկոյի տատինն է. «Մրանց հո տեսնում ես», -ասում է թոռանը երկու հարևաններին ցույց տալով, - «սրանց չկորցնես, նենա: Էս երկուսի համար քեզանով են ծագում արևն ու լուսինը, ամեն ինչում վստահի ու հավատա: Էն բարությունը, որ սրանք արել ու անելու են քեզ, դու երբեք չես կարա վերադարձնես, ոչ էլ խոստացի: Սիրի նրանց էնպես, ինչպես իրենք են քեզ սիրում...»¹⁵:

Դուրբաձեն վկայում է՝ գոյության հենքը եղել, կա ու կլինի ազգային սահման չճանաչող այդ լույսը, որ յուրաքանչյուր մարդ պիտի կրի իր սրտում, անկախ ժամանակից, անկախ ազգությունից:

¹² Նույն տեղում, էջ 171-172:

¹³ Նույն տեղում, էջ 119:

¹⁴ Նույն տեղում, էջ 126:

¹⁵ Նույն տեղում, էջ 184:

ЮМОР КАК ОТРАЖЕНИЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕНТИЧНОСТИ
В РОМАНЕ Н. ДУМБАДЗЕ

БАЛАЯН Н. М.

Резюме

В основе романа Нодара Думбадзе «Я, бабушка, Илико и Иларион» лежит национальный юмор. С помощью небольших историй, повествуемых главным героем, автор раскрывает типологические отличия национального характера. Некоторые персонажи романа Думбадзе наделены свойствами представителей животного мира, а животные в романе уподоблены людям. При этом люди и животные у Думбадзе – вечные, они не рождаются и не умирают, они такие же древние, как сама природа. Автор романа пытается создать образ высоконравственного человека-созидателя. Утонченный юмор Думбадзе способствует раскрытию черт национального характера.

**HUMOUR AS A REFLECTION OF NATIONAL IDENTITY IN N.
DUMBADZE'S WORK**

N. BALAYAN

Abstract

Nodar Dumbadze's novel "Me, Grandma, Iliko and Ilarioni" is based on a humour reflecting the national identity.

Through the story of the main character, the author reinstates national characteristics and folklore originated features. The characters of the novel, people and animals, are interrelated, yet substituent. The author believes them to be perpetual; they are not born, nor can they die, they had existed before the novel was written. In his novels, the author seeks to create an image of a man endowed with creativity and high morality.

N. Dumbadze's novel highlights the symbols of bread, fire and, wine as important features of the beliefs of the Georgian nation, which reinforce the author's efforts to reveal the best aspects of the human nature.